



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 փետրվարի 2018թ. թիվ 35-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ
ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի բ), գ), դ) կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Լոռու մարզի տարածքում 2018 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով՝

1. Հաստատել Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Համայնքների 2018թ. բյուջեներում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2018թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն.

2) Մինչև ս/թ մարտի 1-ը կազմել համապատասխան միջոցառումների պլան և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար.

3) Մինչև ս/թ մարտի 1-ը՝

ա. Լոռու մարզային փրկարարական վարչությանը տրամադրել տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

բ. Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր

տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝

2018 թվականի ընթացքում պարբերաբար քննարկել «Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետերի վրա:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2018թ. փետրվարի 8
ք.Վանաձոր



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ